1620·

Փառք... որ ետ կարողութիւն ոգոյս սուտանուն գրչիս յիմար և տարտամ եղեգնագծիս, հասանել ի վերջին տառիս, որ կոչի Մեկնութիւն Ցոբայ, ի լաւ և յընտիր օրինակէ... Գրեցաւ սա ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Գրիգորի որդոյ Պր· Ավետիքին՝ մականուն Ցօմաժիրաքին, ի խնդրոյ Տէր Գրիգոր կրօնաւորին, որ ետ գրել զայս գիրքս յիշատակ ի Ս· Երուսաղէմ, վասն իւր հոգոյն և իւր ծնողացն. ի թուականութեանս Հայոց ՌԿԸ, և սեպ· ամսոյ Ա, օրն չորեքշաբթի. ի թագաւորութեան Լեհաց Գ Զիկմունտին, և ի կաթողիկոսութեան Հայոց Ս· Էջմիածնայ՝ Տէր Մելքիսեդին. ի քաղաքս Լեհաց՝ որ կոչի Լով, ընդ հովանեաւ Ննջման Ս· Աստուածածնին, և Ս· Հաճկատար Ս· Աստուածածնի և Ս· Ցակոբին և Ս· Խաչին: Արդ որք հանդիպիք սմա... մի բերան Աստուած ողորմի ասացէք հանգուցեալ վարպետին իմոյ Տէր Դաւթի Զեթունցի քահանային. զի այր գիտնական և քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ հին և նոր կտակարանաց. որ բազում ջանիւ և աշխատութեամբ աշխատեցաւ ի վերայ անպիտան ծառայիս, որ ոչ էի հմուտ այսմ արհեստիս և գրագարձիս: Որոյ Տէր Աստուած մեր պարգևեսցէ, և այլն: [Ի Ս· Ղազար]:

1620·

Գրեցաւ սուրբ գիրքս (Ցայսմաւորք) Հայոց թվին ՌԿԹ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսեդ կաթողիկոսին, և ի թագաւորութեանն այս Լեհաց աշխարհին՝ Գ· Զիկմունդին, ի քաղաքս որ կոչի Կամենից, ընդ հովանեաւ ամենօրհնեալ Աստուածածնին սրբուհոյ, և Ս· Նիկողայոս սքանչելագործ հայրապետին, և Ս· Աւետման Աստուածածնին, և այլ սրբոցս... ձեռամբ.. Ցակոբ քահանայի որդւոյ Տէր Գրիգոր աւագերիցու, ի խնդրոյ պատուական և պայազատ Բան Եուրքոյին:.. (Բժշկեան, եր· 140]:

1620·

Աւարտ եղեւ Աստուածաշունչս այս սիրական
Հին և նոր կտակարանքըն լիական.
Թուականիս Հայոց Մեծաց և արեթեան
Հազար վաթսուն ութ յաւելի յարաբարդեան.
Ի յամիսն յապրիէլի ըստ հռոմական
Որ վեշտասանն եղեւ զատիկ մեր հայկական:
Ի յերկիրս յԼուզաց և Լեհաստան,
Ի քաղաքս աստուածախնամ Լով կոչական.
Հայրապետին մերոյ ազգիս արեթական
Տէր Մելքիսէթն կաթողիկոսն արեւելեան.
Ի յարեւմուտս տանըն Սրսա ազնուական՝